ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2024թ. դեկտեմբերի 3 -ին, N 523 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐՈՒՃԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՓԻՆԵ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածներով և 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 61-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արուճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արփինե Մելիքսեթյանի 2024 թվականի դեկտեմբերի 3-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արուճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արփինե Մելիքսեթյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի մասը 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 7 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի դեկտեմբերի 5-ից դեկտեմբերի 13-ը ներառյալ:
2. Արփինե Մելիքսեթյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արուճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի

պաշտոնակատար նշանակել «Արուճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Լիլիթ Ասատրյանին:

3.Արփինե Մելիքսեթյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի դեկտեմբերի 16-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 12/3/2024 13:11:54 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ